Դաս 36. «Սասունցի Դավիթ» էպոսի կերպարները: Սանասար և Բաղդասար, Մեծ Մհեր

Մկրտիչ Խերանյան

ՍԱՄՆԱ ՏՈՒՆ

(հատված)

–Քեռի՛, ի՞նչ ես նստել հանգիստ.
Ժողովուրդը ձեռից գնաց:
Նրանց լացին,
Լացուկոծին
Էլ չեմ կարող, չեմ դիմանա,
Ի սեր Աստծո, մի ճա՛ր արա...
–Ի՞նչ ճար անեմ ես, ա՛յ որդի,
Ես էլ քեզ պես ժողովրդի
Ցավով տանջվում, տապակվում եմ,
Բայց իմ ձեռքում ի՞նչ ճար ունեմ...
–Քեռի՛, ինչո՞ւ թանկություն է,
Ու հաց չկա.
Ինչի՞ց է դա...
–Վար ու ցանքը մեզ մոտ քիչ է.
Այծ ենք պահում, կով ու կթան...
Իսկ մեր հացը հեռու տեղից՝
Գալիս էր, հո՛ւ, Շամ Հալաբից...
Լույս է ընկել առյուծ մի մեջ,
Որ պառկել է ճամփի վրա
Ու չի թողնում մարդ գնա-գա...
Ու հենց դրա համար, տղաս,



Մեծ Մհեր, նկարիչ՝ Հովհաննես Շավարշ

Թանկություն է, հացի պակաս...
–Հա՛, հասկացա,–Միերն ասաց...
Լավ է առյուծը ինձ ուտի,
Քան թե քաղցած ժողովրդի՝
Մոր ու մանկան լաց ու կոծի
Աղաղակը սիրտս խոցի...